ԻՆՔՆԱՆԿԱՐ

- Կենդանակերպի Ձեր նշանը:

- *Ձրիոս:*

- Դուք հավատացյա՞լ եք:

- *Ես լուսավոր մենատների, մաքուր այգիների, առողջ երեխաների, հմուտ բանվորների, գիտակ բժիշկների, անպիղծ բանաստեղծների երկրին եմ հավատում:*

- Ձեր ծնողները հավատացյա՞լ են:

- *Իմ ծնողները գյուղացի հայ մարդիկ են՝ մի օր հավատացյալ են, երկու օր՝ ոչ:*

- Ձեր սիրած կենդանին:

- *Մի ժամանակ ընկերներիս խնդրում էի, որ նկարեն գառը, ուլը, հորթը, քուռակը, փոքրիկ ծառը, կողքին՝ փոքրիկ տղան:*

- Ձեր սիրած եղանակը:

- *Վաղ գարուն՝ մայիսի սկիզբը, մաքուր, լիքը աշունը:*

- Ի՞նչ խենթություններ ունեք:

- *Խենթություններ չունեմ, ինքնավերահսկումը միշտ կա. խենթերին չեմ սիրում:*

- Ձեր արտաքինը Ձեզ դո՞ւր է գալիս:

- *Իմ արտաքինը ինձ դուր չի եկել: Դրա համար էլ այն փորձել եմ սրբագրել գրականությամբ:*

- Ձեր կյանքում եղե՞լ է որևէ ցնցող դեպք:

- *Մի այդպիսի դեպք եղել է, բայց դա չի կարելի դեպք համարել, որովհետև արդեն մի քանի տասնամյակ է այդ դեպքը շարունակվում է. դա իմ ամուսնանալն է:*

- Դուք երջանի՞կ մարդ եք:

- *Երջանիկ եմ այնքանով, ինչքանով մի երկու անգամ գրա-*

կանության աստծո երեսը տեսել եմ:

- Կյանքից հրաժարվելու ցանկություն ունեցե՞լ եք, սիրո՞ւմ եք կյանքը:

- *Եթե քաջ եղած լինեի, պետք է որ վաղուց հրաժարված լինեի, բայց դուք կմնաք անտեր: Վախենամ, որ կմնաք հովիվը կորցրած ոչխարի հոտ, որին գայլը կուտի: Գուցե սա ինքնախաբեություն է կամ գուցե ես ինչ-որ դեր եմ ստանձնում՝ որպես մահից խուսափող մարդ...*

- Ի՞նչ է գրականությունը Ձեզ համար:

- *Գրականությունը ինձ համար դավանանք է:*

- Ո՞րն է գրականության հաստատած ճշմարտությունը:

- *Գրականությունը Աստծուն բերել, տեղադրել է մարդու մեջ:*

- Ի՞նչ եք մտածում գրականություն և գաղափարախոսություն փոխհարաբերության մասին:

- *Ինչպիսի գաղափարախոսության պիտի հարի գրո՞ղը. եթե ազգայնական է՝ գրականություն չի, եթե կոմունիստական է՝ գրա-կանություն չի, եթե հումանիստական է՝ քաղցրալորձ է, եթե բուրժուական է՝ գրականություն չի, եթե հարող է՝ գրող չի, այլ քարոզիչ: Գրողից պահանջվում է միաժամանակյա ներկայություն թվարկված և դարձյալ շատ ու շատ կետերում...*

- Ո՞րն է այսօր գրողի առաքելությունը:

- *Ժամանակը ընթերցելու լեզու ստեղծելը:*

- Ո՞րն է Ձեր գրականության առավելությունը: Ի՞նչն էիք ուզում փոխել աշխարհում, որ փոխվեց կամ չփոխվեց:

- *Ուզում էի Հայոց երկրի համար ավետարան գրել:*

- Ինչի՞ց կուզենայիք փրկել ծմակուտցի և ոչծմակուտցի մարդուն:

- *Հավակնոտ այն մշակույթից, որ բանակներ է գումարում, իր իդեալները զենքով տանում ուրիշի երկիրը, փաթաթում մարդկանց վզին, կարծես մարդուց էլ մեծ իդեա կա: Հիշենք և նզովենք Ալեքսանդր Մակեդոնացուն, Նապոլեոնին, Հիտլերին:*

Սարսափելի բան է, երբ այդ համաճարակային «իդեաները» մեծ ազգերի մեջ են բռնկվում...

- Ի՞նչ ասել է ճշմարիտ գրականություն:

- Եթե կարդում եք ու ասում՝ սա իմ մասին չէ, այլ՝ հարևանիս, նշանակում է գործի ճշգրտությունը մոտավոր է:

- «Արվեստը արվեստի համար». կա՞ այդ սկզբունքը՝ մաքուր արվեստը:

- Երբ արվեստը արվեստի համար է՝ միայն այդ դեպքում է դառնում մարդու համար:

- Ո՞վ է հայը:

- Չի ընկնում մինչև հատակը և չի բարձրանում ամենավերևը: Այդ մարդն է հայը:

- Տիեզերքի մասին:

- Տիեզերքի սահմանը մեր խելագարությունն է:

- Իսկ անսահմանությո՞ւնը:

- Անսահմանությունը մեր անզորությունն է:

- Ձեր հարցը Ձեզ:

- Այ Հրանտ, բոլոր կոնյակներդ խմել ես, բոլոր վայելքներդ ապրել ես, աշխարհից ի՞նչ ես ուզում: